Ամերիկյան սենատը միաձայն դատապարտում է խորհրդա-ազերի հակահայ քաղաքականությունը

Ռամկավար ազատական կուսակցության կենտրոնական գրասենյակից հաղորդում են.

Սենատոր Կարլ Լեյնի նախաձեռնությունը (որի մասին գրել էինք մեր նախանցյալ համարում) արդյունավորվեց. ամերիկյան սենատը միաձայնությամբ քվեարկեց թիվ 138 Որոշումը, որ նախագահության սեղանին էր դրվել մայիսի 17-ին: Սենատի նույն օրվա նիստին, Որոշման հեղինակ Կարլ Լեյնից բացի, առանձին ճառերով հանդես են եկել նաեւ սենատոր, փոքրամասնական ֆրակցիայի նախագահ Բոբ Դոուլը եւ սենատոր Ռոբերտ Քենեդին:

Այսպիսով, ամերիկյան օրենսդիր գերագույն մարմնի՝ կոնգրեսի երկու պալատներից մեկի՝ Սենատի որոշմամբ ամենախիստ բառերով դատապարտվում եւ զգուշացվում է խորհրդային կենտրոնական իշխանությունը Արցախում եւ Հայաստանի սահմաններում հայ ժողովրդի դեմ խժդույժ քաղաքականություն վարելու համար:

ՄԱԿ-ի կենտրոնական գրասենյակից հաղորդում են նաեւ, որ մեր ընկերները ներկայումս աշխատանք են տանում թիվ 138 Որոշումը Ներկայացուցիչների պալատի անդամ, Սաութֆիլդի պատգամավոր Բրումֆիլդի միջոցով Կոնգրես տանելու եւ այդ որոշմանը գործողության ուժ տալու ուղղությամբ:

ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 138

– Քանի որ Խ. Միության եւ Ադրբեջանի կառավարությունները դրամատիկ կերպով ուժեղացրին իրենց հարձակումները Լեռնային Ղարաբաղի, Ադրբեջանի հայ քաղաքացիների, ինչպես նաեւ Հայաստանի վրա.

– Քանի որ Խ. Միության կառավարությունը մերժեց Ղարաբաղի հարցի լուծման համար Խ. Միության Գերագույն խորհրդի արտահերթ նիստ գումարելու Հայաստանի պահանջը.

– Քանի որ Խ. Միության եւ Ադրբեջանի զինված ուժերը ավերեցին հայկական գյուղերն ու տեղահանեցին Լեռնային Ղարաբաղում ու նրա շուրջ գտնվող հայկական շրջանների հայերին՝ խախտելով միջազգայնորեն ճանաչված մարդու իրավունքները, եւ.

– Քանի որ զինված ջոկատները սպառնում են Հայաստանի, Լեռնային Ղարաբաղի ու Ադրբեջանի կայունությանն ու խաղաղությանը, Սենատը

1.- Դատապարտում է Հայաստանի, Լեռնային Ղարաբաղի ու նրա շուրջը հայկական շրջաններում ու համայնքներում անմեղ երեխաների, կանանց ու տղամարդկանց նկատմամբ հարձակումները.

2.- Դատապարտում է ուժի անխտրական օգտագործումը, ներառյալ քաղաքացիական շրջանների ռմբակոծումը, Հայաստանի արեւելյան ու հարավային սահմանների վրա.

3.- Կոչ է անում վերջ տալ շրջափակումներին եւ ուժի գործադրության այլ ձեւերին, Հայաստանի ու Լեռնային Ղարաբաղի դեմ ուղղված սպառնալիքներին, ինչպես նաեւ պահանջում է ճնշման նպատակով վերջերս այնտեղ տեղակայված Խ. Միության բանակի հեռացումը.

4.- Կոչ է անում բոլոր շահագրգռված կողմերի միջեւ երկխոսության՝ հարցի վերջնական լուծման ձեռքբերման համար.

5.- Վերահաստատում է Ս. Նահանգների հանձնառությունը Խ. Միությունում ու նրա տարբեր հանրապետություններում ռազմավարության եւ ինքնորոշման հաջողությանը, եւ արտահայտում իր խորը մտահոգությունը իրենց քաղաքական տենչերն իրագործելու ուղին ընտրած հանրապետությունների ու շրջանների նկատմամբ միջամտության, սպառնալիքի ու ռազմարհեստական լծակների ստեղծման խորհրդային որեւէ ակտի կապակցությամբ: